

ՎԱՐՂԻ ԵՎ ՍՈՒՍԱԿԻ ԱՅԼԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԸ ՀԱՅ  
ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ միջնադարյան սիրերգության մեջ մեծ տարածություն էր գտել վարդի և սոխակի սիրավեպը: Արևելքի ժողովուրդների պատկերավոր մտածողությամբ՝ վարդի թիփերի վրա անընդհատ դալլալող տոխակը հնագույն ժամանակներից սկսած համարվել է այդ ծաղկի անդավաճան սիրահարը: Այս պատկերացումով վարդը սիրո առարկա է, գեղեցիկ աղջիկ կամ հարս, իսկ սոխակը՝ սիրակարոտ երիտասարդ կամ փեսա, որ երջանիկ է միայն վարդի ներկայությամբ: Երևույթի նման քնկալումը պայմանավորված է եղել մի կողմից օրյեկտիվ իրականությամբ (վարդի և սոխակի գոյություն), մյուս կողմից՝ մարդու ապրած զգացմունքի, հոգեբանության, հուզաշխարհի վերարտադրման անհրաժեշտությամբ: Նախապես ժողովուրդների բանահյուսության մեջ դարերով տարածում գտած այս թեման, բնականաբար, վաղ թե ուշ արտահայտություն պետք է գտներ նաև գրականության մեջ: Եվ իսկապես, հայ, պարսիկ, թուրք, վրաց և այլ ժողովուրդների նշանավոր ու անանուն բանաստեղծների ստեղծագործություններում տարբեր ձևերով ու չափերով հաճախ արտահայտվել է վարդ ու սոխակի փոխադարձ սիրո պատկերը: Օրինակ՝ *Ալիշեր Նավոյին* այսպիսի համեմատությամբ է մարմնավորել այդ մտածողությունը.

«Նավոին եմ, իմ սիրածի վարդ այտերը գերել են ինձ,  
Սոխակի պես վարդի վրա միշտ կռանալ եմ ուզում»<sup>1</sup>:

Գրեթե նույնատիպ միտքն ենք հանդիպում *Սայաթ-Նովայի* խաղերում.

«Դու բըլբուլ իս' յիս կարմիր վարթ, չասիս թե վարթըն ջալդ կենա...»<sup>2</sup>:

Հայ գրականության մեջ վարդն այլաբանորեն հանդես է գալիս դեռևս X դարում, բայց վարդ ու սոխակի այլաբանությունը գալիս է պարսիկ բանաստեղծներից, չնայած, որ մեզանում հեթանոսական ժամանակներից վարդը մեր դիցաբանության մեջ կապված է եղել սիրո աստվածուհի Աստղիկի հետ:

Պարսկական պոեզիայում վարդի ու բլբուլի ամենավաղ մշակումը վերագրվում է XII դարի բանաստեղծ *Շեյխ Ֆարիդդին Աթթարին*: Հետագա

<sup>1</sup> Ալիշեր Նավոյի, Գազելներ, Երևան, 1968, էջ 58:

<sup>2</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Երևան, 1987, էջ 35:

մշակումները արդեն XV և հաջորդ դարերի գործեր են: Վարդի ու սոխակի սիրավեպի մասնակի մշակումներ գտնում ենք Աթթարին վերագրվող երկու գործերում՝ «Հավքերի գրույցը» և «Բոլբոլնամե» չափածո երկում: Պոեմի «Սոխակի պատրվակը» գլխում սոխակը թռչուններին բացատրում է իր ապրելակերպն ու հակումները, պաշտպանում վարդի հանդեպ ունեցած սիրո զգացմունքը, և, չկամենալով բաժանվել վարդից, հրաժարվում է մասնակցել հավքերի երթին: Աթթարի պոեմի այս հատվածում է միայն խոսվում բլբուլի ու վարդի սիրո մասին: Ուշագրավ է այն փաստը, որ այստեղ վարդը իբրև անձնավորված հերոս գոյություն չունի: Մինչդեռ միջնադարի հայ քնարերգության մեջ վարդը սովորաբար հանդես է գալիս ոչ միայն սոխակից անբաժան, այլև երբեմն նա է արտահայտում ստեղծագործության հիմնական գաղափարները, մարմնավորելով որոշակի հոգեբանություն և մտածելակերպ, տրամադրություն ու զգացմունք: Կոստանդին Երզնկացու տաղերում սոխակի հետ միասին հատկապես մեծ դեր է հատկացված վարդի կերպարին, որի միջոցով էլ հաճախ հեղինակը զարգացնում է գեղեցիկ կյանքի, սիրո մասին ունեցած իր քրիստոնեական ու աշխարհիկ մտածողությունը: Երզնկացու տաղերից մեկում վարդը դիմելով սոխակին, ասում է.

«Պլպուլ, մի դու զարմանար զպայծառ վարդիս գեղ պատկերին.  
Զի ով որ սեր չունենայ՝ առ ինք չըկայ գեղեցկութիւն,...  
Յով որ սեր կա յիր սըրտին, նա զիս նորա կամօք տանին,  
Որ քանի նա յիս հայի՝ նա հանդարտի սէրն ի սըրտին.  
Առնուն զիս և տանին սիրով սփռնն ի մեջլիսնին,  
Ո՛ր յիմ անուշ հոտոյս ուրախանան՝ ւ ըմպեն զգինին»<sup>3</sup>:

Աթթարի պոեմի հյուսվածքում Սոխակի պատկերը օժանդակ դեր է կատարում ստեղծագործության միստիկական գաղափարը բացահայտելու համար և չունի ինքնուրույն արժեք: Այն ստեղծվել է, որպեսզի հակադրվեն միմյանց երկրային ու երկնային սերերը, ու առաջնությունը տրվի վերջինիս: Սրանով է պայմանավորված սոխակի ու վարդի սիրո այլաբանության թուռցիկ մշակման գոյությունը պոեմում: Այնինչ, հայ քնարերգուները իրենց այլաբանական տաղերում, ոչ միայն այդպես սրությամբ չէին հակադրում երկնային սերն ու երկրայինը, այլև ձգտում էին բանաստեղծությունն այնպես կառուցել, որ այն արտահայտեր թե՛ մեկը և թե՛ մյուս գաղափարը: Բացի դրանից՝ հայ տաղերգուները միայն ամբողջական գործեր են նվիրել այդ թեմային: Սա նշանակում է, որ ի տարբերություն պարսիկ բանաստեղծի, Կ. Երզնկացին, Մ. Նաղաշը, Գ. Աղթամարցին, Սայաթ-Նովան և մյուս տաղասացները հատուկ

<sup>3</sup> Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 142-143:

ուշադրություն են դարձրել հենց վարդ ու սոխակի սիրավեպի պատկերմանը, այդ թեմայի մշակումը դարձնելով իրենց ստեղծագործական աշխատանքի գլխավոր նպատակներից մեկը:

Ժամանակագրական առումով մեզ հայտնի առաջին հայ հեղինակը *Կոստանդին Երզնկացին* է, որ սեր է երգում այլաբանորեն՝ վարդի ու սոխակի օրինակով: Կոստանդինի այս կարգի տաղերի մեծ մասում սերը անջատված չէ բնությունից, և «Բանք վարդի օրինակաւ ՁՔրիստոս պատմէ» տաղը հեղինակը մեկնում է իբրև Քրիստոսի հարության նկարագիր, բայց տաղի առանցքը մնում է վարդի ու սոխակի սերը, որն արթնանում է նիրհած վիճակից.

«Վարդն լըսեց զծայն պլպուլին,  
էբաց ըզդուրըն վրանին,  
Ո՛ր էիան զկանաչ կապայն՝  
հագավ գաթլանն և գխրմզին»<sup>4</sup>:

Բնության նկատմամբ Կոստանդինի ունեցած նման վերաբերմունքն է դառնում պատճառը, որ Մանուկ Աբեղյանը հայ քնարերգության մեջ առանձնացնում է գրական նոր տեսակ՝ բնության քնարերգություն. ««Արդար», «Խմանալի» բառերի բացթողումով արծակվում են մեր կրոնավոր բանաստեղծի (Կոստանդին Երզնկացու-Վ.Ա.) թևերը. նա արդեն ազատ թռիչք է գործում իր սիրած բնության մեջ և երգում լույս, առավոտ, արեգակի ծագում, ուրախ գարուն, այնպես, ինչպես ինքն զգում ու հասկանում է բնությունը: Դրա հետևանքով մեր բանաստեղծությունը ծեռք է բերում մի նոր անկախ գրական տեսակ՝ բնության քնարերգություն, որի մեջ մեծ տեղ են բռնում բանաստեղծի անձնական տպավորությունները բնությունից ու զգացումները մի ներքին ջերմությամբ և կրոնական խորհրդավարությամբ կամ «խորհրդականության» ինչպես ասում էին հմերը»<sup>5</sup>: Եթե վերը հիշատակված տաղում դեռևս աշխարհիկ պատկերի միջոցով տրվում է նաև կրոնական, «հոգևոր սիրո» հասկացությունը, ապա «Անա եղև պայծառ գարուն, հոտըն բուրեաց անուշ վարդուն» սկսվածքով տաղում հոգևորի որևէ հետք չկա և վարդի ու սոխակի սերն արտահայտում է մարդկային իրական փոխհարաբերություններ: Այս տաղում արդեն իր սերը երգող «երիտասարդը»՝ սոխակը, զովերգում է սիրած էակի գեղեցկությունը, և դա ասում է հայ միջնադարին բնորոշ արտահայտչամիջոցներով.

«Աղաղակեի պլլպուլն ի վարդն.  
-Առանց քեզ յո՞նց ելնում ի հուն.  
Յանց քաղեցիր զշունչս ու հոգիս՝  
Այլ չի մնաց երեսս դուն:

<sup>4</sup> Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 139-140:

<sup>5</sup> Մանուկ Աբեղյան, հ. 7, Երևան, 1970, էջ 366:

Հանց ողորմուկ ի վարդն ասաց.  
-Իմ լուսատու արևըն դու,  
Աստղըն զօհալ և մուշտարի,  
Շամս ու դամար իմ թածըս դու»<sup>6</sup>:

Միջնադարի մեր մյուս հեղինակներին ներկայացնելիս էլ կհանդիպենք պատկերների ու նկարագրությունների գրեթե այս նույն համակարգին:

Վարդի ու սոխակի պատմությունն է նաև «Այսօր եղայ հողմըն գարնան» սկսվածքով տաղում, որտեղ բանաստեղծը բացում է սիրո փակ դռները, հրաման արձակում բոլոր ծաղիկներին և հրավիրում «խնդության ու խաղի», քանի որ «...այսօր էհաս ու օր խնդման».

« Հրաման կուտամ ես ծաղկընուն՝  
Փրոշեն տերև խիստ գուն ու գուն.  
Ձի է հասարակաց գարուն,  
Այլ բանդ չըկայ և ոչ զընդան»<sup>7</sup>:

Երզնկացու ստեղծագործության ուսումնասիրողը անշուշտ կնկատի, որ հեղինակը կարծես սիրո մի երկար ճանապարհ է անցնում: Հիշատակված տաղերում կամաց-կամաց բացվում է Կոստանդինի երգած սերը, և նա անցնում է վայելքի, ուրախության, գինու և կնոջ գովքին: Հետաքրքիրն այն է, որ սերը, ուրախությունը, կինն ու գինին վայելելու ցանկությունը հեղինակի մեջ արթնանում է գարնան գալստյան հետ միաժամանակ: «Ահա հոտըն գար գարնան» տաղում բնությունն արթնանալով նիրհած վիճակից, սիրո վայելքի է կոչում նաև մարդուն: Երզնկացին նրբորեն կարողանում է համոզիչ դարձնել աշխարհիկ սիրո բնական լինելը և իր մոտ է հրավիրում բոլոր սիրահարներին.

«Մեճլիս զուգեմ ի սայրան,  
Բլթուլն է ներս ի մաստան,  
Սաղի լուսեղեն մեծ տան,  
Կանգնին ու գինի մեզ տան»<sup>8</sup>:

15-րդ դարում ապրած և ստեղծագործած *Սկրտիչ Նաղաշը* ևս գրել է միջնադարի քնարերգության ավանդական մոտիվներով, սակայն համարվում է առավելապես սոցիալական թեմայի հեղինակ և այդ ոլորտում կատարում է առաջընթաց քայլեր: Մեզ հասել են Նաղաշի 16 տաղեր, որոնցից միայն երեքն են բնության ու սիրո, վարդ ու սոխակի վերաբերյալ («Տաղ ի դէմս մարգարէիցն եւ Քրիստոսին եւ Լուսաւորչին», «Տաղ հարսանեաց եւ ուրախութեան մարդկան», «Տաղ վասն բլթուլին եւ վարդին»): Մեզ հասած այս երեք տաղերում Նաղաշը, ի տարբերություն ճախորդների, չունի նույն բարձր արվեստը: Նրա

<sup>6</sup> Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 135:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>8</sup> Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 155:

որոշ տաղեր նույնիսկ պարզ երկխոսություններ են: Իրական սիրային մոտիվով միակ դրսևորման օրինակը, թերևս վարդի և սոխակի ավանդական զրույցի մշակումն է, սակայն այստեղ ավելի շատ ականատես ենք սիրահարների պարզ երկխոսության (բոլոր հատվածները սկսվում են կամ «Բըլբուլն ի վարդն ասաց...», կամ «Վարդն ի Բըլբուլն ասաց...» տողերով): Իհարկե, այստեղ հեղինակը ներկայացնում է սիրուց այրվող սիրահարի տանջանքները, սակայն արտահայտման ձևերով ու համեմատություններով այն չի կարող նմանվել Կոստանդին Երզնկացու նույնանուն զրույցի մշակման հետ: Այստեղ բացակայում են պատկերավոր ու ճոխ համեմատությունները, իրական սերը բացատրվում է շատ սթափ ու լուրջ.

«Վարդն ի բլբուլն ասաց. Ձիս յէ՞ր կու խոցես,  
Դու զիմ հոգիս առիր, հետ քեզ կու գերես»<sup>9</sup>:

Այնուամենայնիվ Նաղաշը ևս օգտվում է քնարերգության մեջ արդեն ստեղծված արտացոլման ձևերի ավանդական մեթոդներից՝ գովերգելով վարդի բարձր ու նիզար հասակը, անման հայացքը, շրթունքների շարժերը:

Ի վերջո երկխոսությունն ավարտվում է կյանքի ու մահվան վերաբերյալ դառը իմաստախոսությամբ: Այս դեպքում փոխադարձ ու անկեղծ սերը Նաղաշի մոտ դիտվում է, մի կողմից՝ իբրև սփոփանք մահվան հանդեպ, իբրև կյանքի անցողիկության ու մահվան դառը զգացումը խեղդելու, մյուս կողմից էլ՝ մարդկանց միմյանց նկատմամբ սեր ու ներողամտության ներշնչելու միջոց.

«Քանզի սեր աշխարհիս աուրք մի քաղցր է,  
Յետոյ բաժակ մահու և դժոխց է »<sup>10</sup>:

*Գրիգորիս Աղթամարցին* ևս, իր նախորդների նման, անդրադարձել է վարդ ու սոխակի հայտնի զրույցին, որը հնչում է իբրև աշխարհիկ սիրո ապրումների գովերգում: Սոխակը անհանգիստ որոնում է վարդին՝ վախենալով նրա հետ պատահելիք հնարավոր փորձանքներից: Նա պատասխան է պահանջում անգամ այգուց, որ չի պահել իր վարդին, և անիծում նրան:

«Այգի, ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան,  
Ընդ է՞ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական...  
Քակի քո ամուր պատոյ, դառնաս արեակ,  
Զորնա ճուղդ ու տերևդ ծառոցըդ շիտակ»<sup>11</sup>:

Սիրեցյալի կորուստը անչափ մեծ վիշտ է պատճառել սոխակին, բայց ահա կրկին նրան տեսնելու հնարավորությունը միանգամից վերադարձնում է երջանկության զգացումը: Նա հետ է վերցնում իր անեծքը և նամակով իր սերը

<sup>9</sup> Սկրտիչ Նաղաշ, Երևան, 1965, էջ 107:

<sup>10</sup> Սկրտիչ Նաղաշ, նշվ. աշխ., էջ 112:

<sup>11</sup> Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 225:

հայտնում վարդին: Վարդը ծաղիկների առաջ ընթերցում է այրվող սիրահարի նամակը, որտեղ «բարեխղճորեն» արտացոլված են սիրահարի տառապանքները: Ի վերջո՝ սիրահարները պայմանավորվում են հանդիպել գարնանը այգում, և, տեսնելով «զկանաչ տերևը վարդին», սոխակը փառաբանում է «երկնից թագավորին»: Տաղի վերջին տունը կյանքի, փառքի և ուրախության անցողիկության է վերաբերում.

«Յիմար Աղթամարցի գխելքդ ժողովէ,  
Զի սերն այս աշխարհիս հաւսար փոշի է,  
Փառք և ուրախութիւնս այս անցաւոր է,  
Կենացքս կայ վճար, քանզի երագ է»<sup>12</sup>:

Վարդի ու սոխակի սիրավեպին նվիրված ևս մի քանի տաղ ունի Աղթամարցին, սակայն դրանից ամենանշանավորը «Ծաղկունքն ասեն՝ Յերիք արա» սկսված ծրով տաղն է, որտեղ կարծես կերպարները ավելի անհատականացված են՝ վարդ, սոխակ, այգեգործ, ծաղիկներ: Ծաղիկները սոխակից պահանջում են հեռանալ պարտեզից, որտեղ նա իր սերն է գովերգում, սակայն վարդի քաջալերանքը ուժ է տալիս սոխակին: Այս տաղում ևս նկատելի է, որ վարդը ամաչում է, ազատ չէ, և տեսնում ենք նաև սոխակի համարձակությունը, որը վարդի վրանում համբույր է պահանջում՝ իբրև սիրո առիավատչյա: Ի վերջո անպատասխան սիրուց «պալաւըն եղև թևաթափ», բայց վարդն էլ իր հերթին է կանչում.

«...Վարդըն կասէ՝ Մի աներ, հերիք,  
Ես կու կանչեմ ւ ունիմ կարիք»<sup>13</sup>:

Ամբողջ տաղը, ինչպես նաև այս մոտիվով գրված տաղերը, զարգանում են երկու, իրարանբժ զգացումների հիմքի վրա: Մի կողմից անհանգիստ որոնումներն ու սպասումներն են, երբ սիրած էակը չկա կամ անպատասխան է թողնում սերը, իսկ մյուս կողմից բուռն հրճվանք է, երբ մեծանում է սիրած էակին տեսնելու հույսը: Աղթամարցին իր տաղերի նուրբ այլաբանությամբ և կյանքի զգացողությամբ առանձնանում է միջնադարյան հայ քնարերգության մեջ: Նա չի բավարարվում անցյալի ավանդների օգտագործմամբ, փորձելում է հարստացնել իր տաղերը արտահայտչական նոր ու տարբեր հնարանքներով:

Վարդի և բլբուլի այլաբանության տարածված մոտիվի հետաքրքիր մոտեցումն ենք տեսնում *Սայաթ-Նովայի* խաղերում: Սայաթնովյան բլբուլը, որ սովորաբար հանդես է գալիս ղարիբ մականունով, այլաբանական կոնտեքստում անհունորեն սիրող ու տառապող սիրահար է, որ ամենից հաճախ ինքը՝ բանաստեղծն է, իսկ խարով-փշերով ծածկված վարդը նրա սերը մերժող, նրան

<sup>12</sup> Գրիգորիս Աղթամարցի. նշվ. աշխ., էջ 237:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 141:

տանջող ու խոցող սիրուհին է: «Դու բըլբուլ իս, յիս՝ կարմիր վարթ...», -կարդում ենք սիրուհու անունից ասված «Ինձ սիրեցիր, էշխն մնգար» հայերեն խաղի մեջ: «Յիս բըլբուլ ին, վարթըս մընաց խարունըն...», գրում է նա մեկ այլ հայերեն խաղի մեջ: Սայաթ-Նովայի եռալեզու խաղերից կարելի է բերել նման բազմաթիվ օրինակներ: «Էնդուր աչկս չէ ցամաքում» սկսվածքով հայերեն խաղի մեջ վարդի ու սոխակի այլաբանությունը ներկայացված է որոշ սյուժետային գծերով: Բացվել է գարունը: Ծաղիկներով են լցվել սարերն ու դաշտերը: Մանուշակները սոխակին այգի են հրավիրում, բայց նա չի երգում, որոնում է իր սիրելի վարդին: Ալ կակաչը (պուճպուճա) ցանկանում է խափկանքով գերել սոխակին, բայց վերջինս հավատարիմ է իր վարդ-սիրուհուն: Իսկ վարդը չկա, նրան քաղել-տարել են, չմտածելով սոխակի մասին: Սալբու-չինարի ծյուղով սպանվում է սոխակը, և դիակը ընկնում է այգու ցանկապատին: «Վայ քու դարին, դարիբ բըլբուլ, վուր լեշըտ չափարին մընաց»:

Երկու այլ հայերեն խաղերի մեջ երգիչը վարդի ու սոխակի այլաբանական կերպարների հետ հիշատակել է Ֆարհադին և Շիրինին, որոնք նույնպես նրա խաղերում այլաբանական իմաստ են ձեռք բերել:

«Փահրաղըն միռած, Շիրինն ասաց՝ դարեն էրված ին»<sup>14</sup>:

Ինչպես Ֆարհադ-Շիրինի սիրավեպում սիրահար զույգի երջանկությանը խանգարում է դարի-վիուկը, այնպես էլ խար-փուշը խոչընդոտում է վարդի ու բըլբուլի սիրուն: Երկրորդ խաղի մեջ Սայաթ-Նովան ավելի է զարգացնում վարդի ու բըլբուլի այլաբանությունը: Այստեղ էլ հանդես է գալիս սիրավեպի նույն «գործող անձը»՝ ալ կակաչը, որը, սակայն, այս տարբերակում արդեն տիրացել է սոխակին: Եվ այս անգամ վարդն է կանչողն ու սպասողը, հանդիմանողը և անգամ անիծողը: Հայտնի չէ, թե այս խաղը հեղինակը երբ է հորինել: Համենայն դեպս, կարելի է ասել, որ այդ ժամանակ նրա սերը դեռևս ողբերգական ընթացք չէր ստացել, ուստի և նա տվյալ դեպքում ընտրել է այլաբանական այս տարբերակը և խաղն ավարտել ավելի լավատեսորեն:

«Աշխարհունըն վարթն է էլի բըլբուլների սիրեկանըն:

Բըլբուլի լիզվով ին ասուն: «Տե ր, պահե վարթի նըմանըն...»<sup>15</sup>:

Մինչդեռ, ինչպես նախորդ խաղերում, մյուս բոլոր դեպքերում նրա բըլբուլն արյուն-արտասուք թափող անհույս սիրահար է, որ տենչում է ու փնտրում վարդ-սիրուհուն:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 70:

<sup>15</sup> Նույն տեղում: